

զԱստուած կենդանի եւ զսուրբ Նշանն, այլ եւ իշխեաց զինքն երկնաւորաց նման ասել. վասն որոյ եւ Աստուած կործանեացէ զնա ի սպառ, իւրեացէ յարկաց եւ զարմ: 140

Եւ այսպէս ապաւինեալ յԱստուած եւ ի սուրբ Խաչ նորա՝ քաջալերէին զմիմիանս ասելով. Ահա օր փրկութեան, այսօր զիցուք զանձինս ի մահ եւ մարտիցուք վասն սուրբ հաւատոյ: 145

ՎԼԱՏԻՍԼԱՒ ԸՆԳԻԳԷՄ ԵԼԱՆԷ ԹՇՆԱՄԵԱՑ

Կոչեաց թագաւորն զորդին իւր զանդրա-
 նիկ զմեծն Վլատիսլաւ, տվեալ զօրս նմա
 զքաջս եւ զարիս. եւ ասէ. Գնա՛ մինչեւ ի Խօ-
 թին՝ սինոն Օլախաց եւ անդ կաց բանակաւ
 մինչեւ ես գամ: Եւ ԿԹ Խաղախաց հրամայեաց 5
 այլում տեղուջ բանակ առնել. զի Խաղախք
 պահատուրք են եւ քաջք. սոքա միշտ մտանեն
 Թուրքաց աշխարհն ծովով եւ ցամաքով, քան-
 զեն, աւիրեն, հրկիզեն՝ որպէս զԲաֆայ, զՍի-
 նոպ, Պոնտոս, Վառնայ, Պալչիս. եւ երբեմն 10
 զնան մինչ Ենկիլքօյրն հուպ Ստամպուլայ: Իսկ
 զօրավարաց, պետաց, զօրագլխաց զնդից,
 հաղարապետաց, հարիւրապետաց, հեծելա-
 զօրաց, դաւառապետաց, կուսակալաց եւ ա-
 մենայն մեծամեծաց հրամայեաց թիկնապահ 15
 լինել: Իսկ մեծ սպարապետին իւրոյ եւ քաջ
 ախոյեանին Խէթքէվիչ՝ հրամայեց զօրօք զի-
 մել եւ ժամանել առ որդին օգնութիւն. որ եւ

140 զյարմ:
 3 զնայ: — 7 քաջքն: — 12 զնտից: